Մամլո հաղորդագրություն

Հաշվետվություն 2022. Gebrüder Weiss ընկերությունը շարունակում է արձանագրել աճ

Լոգիստիկ ընկերությունն ավելացնում է շրջանառությունը 18 տոկոսով և ամրապնդում իր դիրքերը հիմնական շուկաներում / 67 միլիոն եվրոյի ներդրում ցանցի ընդլայնման և թվայնացման մեջ / կլիմայի վրա ազդեցության չեզոքացմանն ուղղված հետագա քայլեր

Ք. Լաուտերախ, 14-ը մարտի, 2023թ. Միջազգային բեռնափոխադրումներ և լոգիստիկ ծառայություններ իրականացնող Gebrüder Weiss ընկերության վերջին ֆինանսական տարվա զուտ շրջանառությունը կազմել է 3,01 միլիարդ եվրո: Նախորդ տարվա համեմատ այդ ցուցանիշը վկայում է 18 տոկոս աճի մասին (2021թ.-ին՝ 2,54 միլիարդ եվրո): Այսպիսով, լոգիստիկ ընկերությունը շարունակում է վերջին տարիների դրական զարգացումը: «Մենք կարողացել ենք դժվարին պայմաններում շարունակել մեր ռազմավարական նպատակների իրականացումը՝ ընդլայնելով մեր ներկայությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, ԱՄՆ-ի և Ասիայի առանցքային շուկաներում, ինչպես նաև առաջընթաց ենք ունեցել այնպիսի առաջնահերթ հարցերում , ինչպիսիք են թվայնացումը և մինչև 2030 թվականը կլիմայի վրա ազդեցության չեզոքացումը: Գործունեության բոլոր ոլորտներում արձանագրած լավ արդյունքները փաստում են այն, որ մեր դիրքերը ամուր են, և մենք պատրաստ ենք ապագայի մարտահրավերներին», — ասում է Gebrüder Weiss ընկերության գործադիր տնօրեն՝ Վոլֆրամ Զենգեր-Վայսը (Wolfram Senger-Weiss): Սեփական կապիտալի հարաբերակցությունը նույնպես ավելացել է և այժմ կրկին կազմում է շուրջ 60 տոկոս (2021թ.-ին՝ 57 տոկոս), ինչը ընդգծում է ընկերության կայունությունը և փաստում է Gebrüder Weiss ընկերության հուսալի գործատու լինելը:

Ցամաքային բեռնափոխադրումների բաժինը արձանագրել է շրջանառության աճ 16 տոկոսով՝ հասնելով 1479 միլիոն եվրոյի (2021թ.-ին՝ 1277 միլիոն եվրո):«Առաքում տուն» ծառայության առաքումների ծավալը մասնավոր ստացողներին տարեկան կտրվածքով ունեցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ շուրջ 1,53 միլիոն առաքանի Ավստրիայում և Արևելյան Եվրոպայում (2021թ.-ին՝ 1,58 միլիոն առաքանի): Այսպիսով, Gebrüder Weiss-ը պահպանել է իր առաջատար դիրքը շուկայի այդ սեգմենտում : Օդային և ծովային բեռնափոխադրումների սեկտորը գրանցել է նշանակալի աճ՝ տարին ավարտելով 1272 միլիոն եվրո շրջանառության արդյունքով, ինչը համապատասխանում է 24 տոկոս աճի (2021թ.-ին՝ 1024 միլիոն եվրո): Այդ աճը պայմանավորված էր ծովային և ավիա ընկերությունների

բեռնափոխադրումների սակագների բարձրացմամբ: Առաքանիների ծավալները գրեթե անփոփոխ են մնացել DPD-Ավստրիայի համար, որի համասեփականատեր է հանդիսանում Gebrüder Weiss ընկերության փաթեթների և ծանրոցների առաքման ծառայությունը. նախորդ տարվա ընթացքում փոխադրվել է 66 միլիոն փաթեթ (2021թ.-ին՝ 66,5 միլիոն):

Միջազգային ցանցի ընդլայնում

Չնայած 2022 թվականի տնտեսական մարտահրավերներին կապված Ուկրաինայում պատերազմի, էներգետիկ խնդրի և գնաճի համատեքստում, Gebrüder Weiss-ը հավատարիմ մնաց իր ներդրումային ռազմավարությանը: Ընդհանուր առմամբ 67 միլիոն եվրո է ներդրվել ընկերության սեփական ցանցի ամրապնդման, ինչպես նաև միջազգային տեղանքների և ծառայությունների ընդլայնման համար: Ընկերությունը հիմնական ուշադրությունը ուղղել է Գերմանիայի, Հունգարիայի, Ռումինիայի և ԱՄՆ-ի, ինչպես նաև Թուրքիայի և Վրաստանի վրա: Վերջին երկու երկրները Տարանցիկ Միջանցքի կենտրոնական օղակներն են հանդիսանում , որոնցով լոգիստիկայի ոլորտի գիտակը ընդլայնել է իր տրանսպորտային կապերը Կենտրոնական Ասիա և Չինաստան:

Գերմանական լոգիստիկայի կարևոր շուկայում Gebrüder Weiss-ը կարողացել է ամրապնդել իր դիրքերը օդային, ծովային և ցամաքային բեռնափոխադրումների բնագավառում: Հարավային Գերմանիայում ավարտվեց Lode բավարական բեռնափոխադրող ընկերության անվանափոխման գործընթացը՝ վերանվանվելոն Գեբրուդեր Վայս Վալդկրայբուրգ: Նախատեսվում է ցամաքային բեռնափոխադրումների ցանցի շարունակական ընդլայնում հարավային Գերմանիայում, որի առաջիկա քայլերից է Բադեն-Վյուրտեմբերգում Rentschler բեռնափոխադրող ընկերության ձեռքբերումը 2023 թվականի սկզբին: Ցանցի աճին զուգահեռ աճեց նաև աշխատակիցների թիվը. այն աճել է վեց տոկոսով՝ հասնելով մոտ 8400 աշխատողի (2021թ.-ին՝ 7900):

Շարունակում են մնալ ուշադրության կենտրոնում թվայնացումը և կայունությունը

2022 թ-ի կազմակերպությունը հետևողականորեն իրականացրել է իր թվայնացման ռազմավարությունը ՝ «Երկու աշխարհների լավագույնը», որը Gebrüder Weiss-ը դիտարկում է որպես գործառնական և թվային մասնագիտացման համադրություն : Այդ նպատակով, ի թիվս այլ քայլերի, ստեղծվեց myGW հաճախորդների թվային պորտալը, որը հաճախորդներին տրամադրում է իրական ժամանակում տեղեկատվություն ապրանքների շարժի վերաբերյալ և դրանով իսկ ապահովում է մատակարարման ողջ շղթայի առավելագույն թափանցիկությունը: «Մեր նպատակն է ապահովել լավագույն լուծումները մեր հաճախորդների մատակարարման

շղթաների համար՝ նվազագույնի հասցնելով մեր շրջակա միջավայրի վրա ազդեցությունը: Այս նպատակով մենք մշտապես ներդրումներ ենք կատարում մեր լոգիստիկ տերմինալներում և թվային գործիքակազմում, միաժամանակ վերապատրաստելով մեր անձնակազմին և բացահայտելով էկոլոգիապես մաքուր տրանսպորտի տարբերակները», — բացատրում է Վոլֆրամ Զենգեր-Վայսը:

Այն փաստը, որ Gebrüder Weiss-ը հավատարիմ է կայուն զարգացման նպատակներին և ցանկանում է նպաստել գլոբալ կլիմայի պաշտպանությանը, փաստագրվել է լոգիստիկ ընկերության կողմից 2022թ. հրապարակված իր Կայունության զեկույցում : Համապատասխան իր նպատակներին կազմակերպությունը մտադիր է մինչև 2030 թվականը հասնել ածխածնային չեզոքության իր բոլոր տերմինալներում: Այս անցման հիմնական տարրը վերականգնող աղբյուրներից ստացվող էներգիայի ավելացումն է: Անցյալ տարի Gebrüder Weiss-ը չորս նոր ֆոտովոլտային համակարգեր է տեղադրել Գերմանիայում, Ավստրիայում և Շվեյցարիայում: Սա նշանակում է, որ ընդհանուր առմամբ 22 նման կայաններ արդեն գործում են՝ նվազեցնելով CO2-ի արտանետումները տարեկան 1110 տոննայով: Այս երկրներում և Արևելյան Եվրոպայում կշարունակվեն նույնատիպի ներդրումները 2023 թվականին:

Շարժ կա նաև այլընտրանքային շարժիչների ոլորտում: Սեփական ջրածնային բեռնատարների միջքաղաքային հաջող փորձարկումներից հետո Gebrüder Weiss-ը ծրագրում է հետագա ներդրումներ այս տեխնոլոգիայի մեջ: 2023 թվականին հինգ նոր H_2 շարժիչով աշխատող բեռնատարներ կհայտնվեն Գերմանիայի ճանապարհներին: Ավստրիայում և Արևելյան Եվրոպայում քաղաքային առաքումների համար նախատեսվում է ավելի մեծացնել էլեկտրասնուցմամբ ֆուրգոնների թիվը:

Gebrüder Weiss-ն ակնկալում է, որ լոգիստիկայի բնագավառը կկայունանա 2023 թվականին: Ներկայումս փոխադրումների թիվը փոքր-ինչ կրճատվել է, իսկ օդային և ծովային տրանսպորտի ոլորտում սակագները գրեթե իջել են մինչև 2019 թ.: Այս առումով ակնկալվում է նաեւ շրջանառության նվազման միտում: Ընդհանուր աշխարհաքաղաքական իրավիճակը կարող է լրացուցիչ մարտահրավերներ առաջացնել: Վոլֆրամ Զենգեր-Վայս - «Համաճարակը ցույց տվեց, թե որքան արդյունավետ է լոգիստիկայի ոլորտը և որքան արագ այն կարող է արձագանքել փոփոխվող պայմաններին: Անցած տարում Gebrüder Weiss-ը կարողացավ ավելի ամրապնդել իր ֆինանսական դիրքերը և խթանել նորարարությունները՝ միաժամանակ մնալով իր հաճախորդների կողքին և սատարելով նրանց կարիքները համապատասխան թվային ծառայությունների միջոցով: Իհարկե ավելորդ է նշել, որ մենք անհանգստացած ենք և լրջությամբ ենք դիտարկում ներկայիս տնտեսական կանխատեսումները, բարձր գնաճը և պատերազմը Ուկրաինայում: Այնուամենայնիվ, մենք ի վերջո շարունակում ենք մնալ ուժեղ կազմակերպություն, և դա մեզ վստահություն է տալիս»:

Նկարագիր՝ Անցած ֆինանսական տարում լոգիստիկ ընկերությունն ապահովել է 3 միլիարդ եվրոյի զուտ շրջանառություն: (Աղբյուր. Gebrüder Weiss:)

Նկարագիր՝ Վոլֆրամ Զենգեր-Վայս, Gebrüder Weiss ընկերության գործադիր տնօրեն: (Աղբյուր. Gebrüder Weiss / Գնաուդշուն:)

Նկարագիր՝ Gebrüder Weiss ընկերության տնօրինության կազմ (ձախից). Յուրգեն Բաուեր (Jürgen Bauer), Փեթեր Կլոյբեր (Peter Kloiber), Վոլֆրամ Զենգեր-Վայս (նախագահ) և Լոթար Թոմա (Lothar Thoma): (Աղբյուր. Gebrüder Weiss / Գնաուդշուն:)

Նկարագիր՝ Մինչև 2030 թվականը Gebrüder Weiss-ը մտադիր է իր բոլոր մասնաճյուղերը շահագործել կլիմայական չեզոք եղանակով: Այստեղ պատկերված է ֆոտովոլտային համակարգը Լաուտերախի մասնաճյուղում, Gebrüder Weiss-ի գլխամասային գրասենյակը հետին պլանում: (Աղբյուր. Gebrüder Weiss / Սամս:)

Նկարագիր՝ Gebrüder Weiss-ը շարունակում է ներդրումները ջրածնային շարժիչներով տեխնոլոգիաների մեջ: Ընկերության սեփական H_2-բեռնատարը 2022թ. հաջողությամբ ավարտեց միջքաղաքային փորձարկումը դեպի Պրահա: (Աղբյուր. Gebrüder Weiss:)

Gebrüder Weiss ընկերության մասին

Gebrüder Weiss Holding AG, որի գլխամասային գրասենյակը Ավստրիայի Լաուտերախ քաղաքում է, լոգիստիկ ամբողջական ծառայություններ մատուցող համաշխարհային ընկերություն է, որն ունի շուրջ 8400 աշխատակից և 180 սեփական մասնաճյուղեր: Ընկերության վերջին ֆինանսական տարվա շրջանառությունը կազմել է 3 միլիարդ եվրո (2022 թվականին): Ընկերությունն իրականացնում է բեռնափոխադրումներ և առաջարկում է լոգիստիկ լուծումներ, մատուցում է թվային ծառայություններ և ապահովում է մատակարարման շղթայի կառավարումը: Թվային և ֆիզիկական կարողությունների համատեղումը կազմակերպությանը հնարավորություն է տալիս արագ և ճկուն կերպով արձագանքելու հաճախորդների կարիքներին: Բնապահպանական, տնտեսական և սոցիալական բազմաթիվ միջոցառումների շնորհիվ ընտանեկան ընկերությունը, որն ավելի քան 500 տարվա պատմություն ունի տրանսպորտային բիզնեսում, այսօր համարվում է նաև բիզնեսի կայունության առաջատար: www.gw-world.com

Հետադարձ կապ

Gebrüder Weiss ընկերության հետադարձ կապի բաժին
Մերլին Հերման
press@gw-world.com
Բունդեսշտրասե 110, Լաուտերախ A-6923, Ավստրիա
Հեռ.՝ +43.5574.696.2169
Ֆ.՝ +43.5.9006.2173
www.gw-world.com/de/news